ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 2. Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը

1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ հարկադիր կատարման ծառայություն) ապահովում է ~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքով նախատեսված դատական ակտերի հարկադիր կատարումը:

Հոդված 3. Հարկադիր կատարման ծառայության մասին օրենսդրությունը

1. Հարկադիր կատարման ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, ~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքից~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքից և «Հանրային ծառայության մասին» օրենքից, այլ օրենքներից ու իրավական ակտերից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

Հոդված 21. Գլխավոր հարկադիր կատարողի լիազորությունները

1. Գլխավոր հարկադիր կատարողը՝

1) ղեկավարում և հսկողություն է իրականացնում հարկադիր կատարման ծառայության գործունեության նկատմամբ.

2) ապահովում է սույն օրենքի, ~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքի, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի, «Հանրային ծառայության մասին» օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև համապատասխան նախարարի հրամանների և ցուցումների կատարումը.

3) ընդունում է հարկադիր կատարման ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ, տալիս է ցուցումներ.

4) առաջարկություն է ներկայացնում համապատասխան նախարարին՝ ծառայության կառուցվածքի վերաբերյալ.

5) միջնորդություն է ներկայացնում համապատասխան նախարարին՝ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալին խրախուսելու կամ նրա նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու մասին.

6) քննում է հարկադիր կատարողների նկատմամբ բերված բողոքները, վերացնում է հարկադիր կատարողների անօրինական որոշումները.

7) նշանակում և անցկացնում է ծառայողական քննություններ.

8) ծառայողական քննության ժամանակահատվածում կարող է ժամանակավորապես դադարեցնել իր կողմից պաշտոնի նշանակված ծառայողի լիազորությունները.

9) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-16-Ն)***

10) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-16-Ն)***

11) սահմանում է մարզային (Երևանի քաղաքային) բաժինների պետերի կողմից հաշվետվություններ ներկայացնելու կարգը և ժամկետները.

12) կազմակերպում է ծառայողների հատուկ ուսուցումը.

13) իր իրավասության սահմաններում խրախուսում կամ կարգապահական տույժի է ենթարկում հարկադիր կատարման ծառայության՝ իր կողմից պաշտոնում նշանակված ծառայողներին.

14) առաջարկություններ է ներկայացնում համապատասխան նախարարին՝ դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսդրության կատարելագործման վերաբերյալ:

Գլխավոր հարկադիր կատարողն ունի նաև օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 23. Մարզային (Երևանի քաղաքային) բաժնի պետի լիազորությունները

Մարզային (Երևանի քաղաքային) բաժնի պետը՝

1) կազմակերպում և վերահսկում է բաժնի աշխատանքները.

2) գլխավոր հարկադիր կատարողի սահմանած կարգով և ժամկետներում ներկայացնում է հաշվետվություններ.

3) իրականացնում է սույն օրենքի, ~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, համապատասխան նախարարի հրամանների, որոշումների և ցուցումների, գլխավոր հարկադիր կատարողի հրամանների, ցուցումների կատարումը, միջնորդություն է ներկայացնում գլխավոր հարկադիր կատարողին բաժնի ծառայողներին խրախուսելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին.

4) լուծում է հարկադիր կատարողի ինքնաբացարկի կամ նրան հայտնված բացարկի հարցը.

5) ենթակայության կարգով քննում է հարկադիր կատարողի գործողությունների դեմ բերված բողոքները, վերացնում անօրինական որոշումները՝ այդ մասին իրազեկելով գլխավոր հարկադիր կատարողին կամ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալին.

6) օրենսդրությամբ վերապահված լիազորությունների սահմաններում տնօրինում է բաժնի դեպոզիտ հաշիվը: